ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԻ ՀՆԱԳՈՅՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՈՒԱՆ ՇՈՒՐՋ

Կարէն Մաթեւոսեան

Բագրատունեաց Անի մայրաքաղաքից շուրջ 5 կմ դէպի արեւելք՝ Ախուրեան գետի աջ ափին գտնուող Հոռոմոսի վանքը միջնադարեան Հայաստանի ամենանշանաւոր հոգեւոր եւ մշակութային կենտրոններից էր: Վանքը հիմնադրուել է մինչեւ Անիի մայրաքաղաք հռչակուելը, Ժ. դարի 30-40-ական թուականներին, սակայն նրա յետագայ պատմութիւնը սերտօրէն կապուած է եղել Անիի հետ: Կարելի է ասել, որ հիմնադրման ժամանակ փոքրիկ այս վանքի յետագայ խոշոր ծաղկումը պայմանաւորուած էր հէնց Անիի մայրաքաղաք հռչակուելով եւ այն հանգամանքով, որ այստեղ գահակալած առաջին թագաւորը՝ Աշոտ Գ Ողորմածը (953-977), Հոռոմոսը դարձրեց թագաւորական հանգստարան (դամբարանավայր): Յայտնի է, որ նա, Կարսում գահակալող հօրը՝ Աբաս Բագրատունուն (929-953) փոխարինելով, չշտապեց թագադրուել, այլ փորձեց գրաւել Հայոց նախկին մայրաքաղաք Դուինը, որպէսզի այն դարձնի մայրաքաղաք: Սակայն, ռազմական անյաջողութիւն կրելով, նստավայր դարձրեց թագաւորութեան կենտրոնական մասում գտնուող Անին: Հէնց այստեղ նա 961 թ. Անանիա Ա Մոկացի (946-968) կաթողիկոսի ձեռքով թագադրուեց՝ այդ առիթով բազմաթիւ հիւրերի մասնակցութեամբ մեծ հանդիսութիւն կազմակերպելով, որի մասին պատմում է Մատթէոս Ուռհայեցին[1]: Անին այդ ժամանակ հռչակուեց թագաւորութեան մայրաքաղաք, որտեղ յետոյ գահակալեցին Բագրատունի յաջորդ չորս թագաւորները:

Անիի միջնաբերդն ամրացնելով եւ քաղաքի փոքր պարիսպը կառուցելով՝ Աշոտ Ողորմածն ուշադրութիւն դարձրեց նաեւ Անիին ամէնից մօտ գտնուող վանքին, որը Հոռոմոսն էր, եւ տնօրինեց, որ մահից յետոյ այնտեղ հողին յանձնուի իր աճիւնը: Մինչեւ Ի. դարի սկզբները Հոռոմոսի Ս. Գէորգ եկեղեցու մօտ պահպանուել էր Աշոտ Ողորմածի արձանագիր տապանաքարը: Նրա որդիներից Գագիկ Ա-ը (989-1017) եւ թոռը՝ Յովհաննէս Սմբատը (1017-1041) վանքում եկեղեցիներ կառուցեցին: Յովհաննէս Սմբատը 1036 թ. Ս. Գէորգ եկեղեցու արձանագրութեան մէջ, գրում է, որ նուիրատուութիւն է կատարել «...ի մեր հանգստարանս թագաւորաց, ի տիեզերահռչակ վանսս Հոռոմոսի»[2]: Անիում աթոռակալած առաջին կաթողիկոսը՝ Սարգիս Ա Սեւանցին (992-1019, մահ. 1021 թ.), նոյնպէս թաղուել է Հոռոմոսում:

Բագրատունեաց շրջանում թագաւորական, իսկ յետագայում՝ յայտնի իշխանական տոհմերի ու Անիի եպիսկոպոսների հովանաւորութիւնը վայելած Հոռոմոսի վանքը հոգեւոր մշակութային մեծ աւանդ է թողել: Հետաքրքիր է, որ ինչպէս Անին ժողովրդական պատկերացումներում հռչակուած էր մէկ օրում 1001 եկեղեցիներում մատուցուող պատարագներով[3], Հոռոմոսն էլ հռչակուած էր մէկ օրում մատուցուող 40 պատարագով: Այդ մասին տեղեկութիւնը հանդիպում է Վարդան Արեւելցու «Աշխարհացոյցի» մէջ (Հոռոմոսը յիշւում է ուշ միջնադարում ստացած Ղօշավանք անունով), բայց հաւանօրէն հին ծագում ունի. «Զորոյ գետն յԱնու, որ ասէն Արփաչայի, անդ է Ղօշավանքն՝ Սուրբ Յովանէս եւ Սուրբ Գէւորք, զարմանաչէն եւ հռչակաւոր աթոռ, եւ կան բազում եկեղեցիք՝ խ (40) խորան է եւ խ (40) պատարագ կու լինի Ա (1) օրն»[4]:

Ուսումնասիրելով Անիի արուարձանները՝ Թորոս Թորամանեանը եկել է այն եզրակացութեան, որ իր ծաղկման տարիներին պարիսպներից դուրս՝ հիւսիս-արեւելքում, քաղաքը հասնում էր մինչեւ Հոռոմոսի վանքը[5]: Հոռոմոսի ու Անիի փոխադարձ սերտ կապն այնքան ակնյայտ է, որ անգամ 20-րդ դարասկզբին քաղաքի աւերակներն այցելած Լէօն գրում է. «Անի գնացողներին ես խորհուրդ կը տամ նախ այցելել Հոռոմոսը: Սա նախադուռն է: Անին այստեղից է սկսւում...»[6]:

Հոռոմոսի վանքը հիմնադրուել է Աբաս Բագրատունու թագաւորութեան տարիներին Բիւզանդիայից եկած հայ վանականների կողմից, որոնք, խուսափելով այնտեղ սկսուած կրօնական հալածանքներից, վերադառնում են հայրենիք, հիմնում իրենց վանքերը: Ստեփանոս Տարօնեցի Ասողիկը, որն այդ իրադարձութիւնների ժամանակակիցն էր, Աբասի թագրտսեր ժամանակագրութեանը նուիրուած գլխում այս մասին պատմելով, խօսքն սկսում է Շիրակի հարեւան գաւառի՝ Արշարունիքի Կամրջաձորի վանքից, որի հիմնադիր Յովհաննէսը Հայաստան էր եկել «Հալածեալ յարեւմտեայ աշխարհէն, յեգերացւոց գաւառէն, ի քաղկեդոնական մարդադաւան աղանդիցն...»[7]: Դրանից յետոյ պատմիչն անդրադառնում է Հոռոմոսին՝ նշելով հիմնադիր Յովհաննէսի ողորմածութեան ու աղքատասիրութեան, վանքում օտարականներին ու ճամփորդներին հիւրընկալելու սովորութեան մասին. «Իսկ ի գաւառն Շիրակայ՝ Հոռոմոսին կոչեցեալ վանք շինեցաւ ի ձեռն Յովաննիսի, որ էր զարդարեալ յողորմածութեան զարդս: Վասն զի ողորմածութեամբ եւ առաքինութեամբ բաշխէր, մինչեւ ի զգեստուցն իւրոց մերկանայր զամենայն բաց՝ յորժամ աղքատաց հանդիպէր եւ անցաւորաց, եւ ճանապարհորդաց հանգստարան պատրաստէր զտեղին՝ մինչեւ հանգչել իբր յիւրեանց տան ամենայն օտարաց, որ մինչեւ ցայսօր երեւի նոյն նշան ողորմածութեան ի տան յայնմ»[8]:

Ասողիկից շուրջ մէկուկէս դար անց ժամանակագիր Սամուէլ Անեցին, պատմիչի տեղեկութիւնները համառօտելով, Աբասի թագաւորութեան մասին գրելիս նշում է. «Առ սովաւ հաստատեցան ուխտք սրբութեան Կամրջաձոր եւ Կապուտքար ի գաւառին Աշարունեաց. եւ հռչականունն Հոռովմոսին կոչեցեալ վանք եւ Դպրէվան ի Շիրակ գաւառի»[9]:

Վանքի անունն առաջացել է վանականների, Բիւզանդիայից, այսինքն՝ «Հոռոմների երկրից» եկած լինելու պատճառով, որի մասին յստակ նշում է ԺԳ. դարի

---

1 *Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն* (գրաբար-աշխարհաբար, թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Հ. Բարթիկեանի), Երեւան, 1991, էջ 8-9:

2 *Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս*, Վենետիկ, 1864, էջ 166: Այս եւ յաջորդ մէջբերումներում ընդգծումները մերն են (Կ. Մ.):

3 *Կ. Մաթեւոսեան, Անի. Եկեղեցական կեանքը եւ ձեռագրական ժառանգութիւնը*, Ս. Էջմիածին, 1997, էջ 176-188:

4 ՄՄ, ձեռ. թիւ 8100, թերթ 254ա:

5 *Թ. Թորամանեան, Նիւթեր հայկական ճարտարապետության պատմության*, աշխատութիւնների ժողովածու, Երեւան, 1942, էջ 327-328:

6 *Լէօ, Անի*, Երեւան, 1963, էջ 104-105.

7 *Ստեփանոս Տարօնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական*, աշխատասիրութեամբ Ստ. Մալխասեանցի, Սպբ, 1885, էջ 173:

8 *Ստեփանոս Տարօնեցի Ասողիկ*, էջ 174:

9 *Սամուէլ Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ*, բնագիրը կազմեց Ա. Հայրապետեանը, Եր., 2011, էջ 118:

պատմիչ Կիրակոս Գանձակեցին. «Զի կոչէին զերիցունսն՝ Հոռոմոց երէց, անուանեցին զմի վանքն, որ ի Շիրակ՝ Հոռոմոց վանք, որ ցարդ եւս ասի՝ Հոռոմեցի վանք»[10]: Աբաս Բագրատունու ժամանակ Հայաստանում բազմաթիւ վանքերի հիմնադրումը միայն Բիւզանդիայից եկած վանականների անուան հետ կապող տեսակէտը վիճարկում է Գրիգոր Մաքսուդեանը[11], սակայն, մասնաւորապէս Հոռոմոսի դէպքում, այս անունը դժուար է այլ բացատրութիւն տալ: Կարծում ենք, որ վանքերի հիմնադրումը տեղի է ունեցել Ժ. դարի 30-40-ական թուականներին, որին նպաստել են Բիւզանդիայից եկած վանականները, ինչպէս նաեւ՝ Աբասի օրօք երկրի խաղաղ վիճակը եւ հէնց Թագաւորի՝ այս գործընթացի նկատմամբ ունեցած բարեացակամ վերաբերմունքը:

Հոռոմոսի վանական համալիրը բաղկացած է կառոյցների երկու հիմնական խմբից. հնագոյնը գտնւում է լայնեզը ձորի ներքեւի մասում՝ Ախուրեան գետի ոլորանի դիմացի փոքրիկ բարձունքի վրայ: Այն բաղկացած է գրեթէ մէկ շարքով՝ յաջորդաբար տեղակայուած երկու եկեղեցիներից եւ մէկ մատուռից, որի հարաւարեւմտեան կողմում գտնւում է Աշոտ Գ Ողորմածի գերեզմանը: Եկեղեցիների արեւմտեան մուտքերը բացւում են դէպի գետը: Առաջինը վանքի ցայժմ պահպանուած հնագոյն եկեղեցին է, որի անուանը կանդրադառնանք ստորեւ, երկրորդը Գագիկ Ա-ի կառուցած Ս. Գէորգն է, որի արձանագրութեան մէջ նա սուրբ Գեւորգի բարեխօսութիւնն է հայցում Ցիսուսի երկրորդ գալստեան ժամանակ: Այս յուշարձանախմբի դիրքի առանձնայատկութիւնն այն է, որ արեւմտեան կողմից անցնող գետի հեղեղատը միւս երեք կողմից շրջանցում է բարձունքը, եւ, փաստօրէն, Ախուրեանի ջրերի մակարդակի բարձրացման, վարարման ժամանակ եկեղեցիները յայտնւում են կղզու վրայ[12]:

Վանական կառոյցների երկրորդ խումբը գտնւում է առաջինից դէպի հարաւ, բաւական բարձր դիրքում, որի հարաւային կողմի ձորակով անցնում է Ախուրեան գետը: Համալիրի արեւելեան կողմում Ս. Յովհաննէս գեղաշէն մեծադիր եկեղեցին է, որը ժամատնով հանդերձ կառուցել է Յովհաննէս Սմբատ Թագաւորը 1038 թ.: Սրանց շուրջ յետագայում աւելացուել են բազմաթիւ մատուռներ, նշխարատներ, գրատուն եւ այլն: Այս հատուածում՝ վանքից դէպի արեւմուտք, յետագայում ձեւաւորուել է Հոռոմոս փոքրիկ գիւղը, որն Առաջին աշխարհամարտից յետոյ անմարդաբնակ է դարձել:

Անիից դէպի վանք եկող ճանապարհն անցնում է հիւսիսային կողմի հարթավայրով, որտեղ վանքի ուղղութեամբ կառուցուած է զոյգ աշտարակաւոր մի կամար, հաւանաբար՝ զանգակատուն: Ուշ շրջանում այն կոչուել է Ղօշեր (Խօշեր)[13]: Այս փոքր կառոյցը Հոռոմոսի վանքի խորհրդանշական մուտքը կարելի է համարել (Հոռոմոսից Անի գնացողների համար էլ՝ Անիի մուտքը), որը սակայն ունեցել է նաեւ որոշակի գործնական դեր՝ թերեւս

10 *Կիրակոս Գանձակեցի*, էջ 85:

11 **K. Maksoudian**, *A Note on the Monasteries Founded during the Reign of King Abas Ier Bagratuni*,- REArm, 22 (1990/91), pp. 203-215.

12 Ամռան ամիսներին այս հեղեղատում կուտակուած ջուրը գարշահոտութիւն էր առաջացնում եւ վանականներին դժուար կացութեան մէջ դնում: Պահպանուել է մի պատմութիւն այն մասին, որ ԺԱ. դարի երկրորդ կէսին Արշարունիքի Խաւարաձորի վանքի վանահայր Ատոմն, իր հետ ունենալով հրաշագործ Գետարգել Սուրբ Նշանը, գալիս է Հոռոմոս եւ, խաչի զօրութեամբ ճեղքելով ժայռը, բացում է գետի՝ վանքը շրջանցող հունը, որով այն ազատւում է ջրերի կուտակումից ու գարշահոտութիւնից (*Ղ. Ալիշան, Շիրակ*, Վենետիկ, 1881, էջ 28-29):

13 «Ղօշեր» թուրքերէն նշանակում է զոյգ (նկատի են ունեցել զոյգ աշտարակները):

զանգերի հնչեցմամբ վանականներին տեղեկացնելով վանք եկող որեւէ հանդիսաւոր թափօրի մասին[14]: Բայց, մեր կարծիքով, այն առաջին հերթին կատարել է ուղենիշի դեր: Բանն այն է, որ թէ՛ Ախուրեան գետի աջ կողմում ընկած հիւսիսային ընդարձակ հարթավայրից եւ թէ՛ հարաւային կողմից ձորի մէջ գտնուող Հոռոմոսի վանքը բնաւ չի երեւում, եւ նրա տեղը կարելի է գտնել հէնց բարձրադիր Ղօշերի միջոցով կողմնորոշուելով: Թերեւս պատահական չէ, որ այս փոքրիկ կառոյցի անունը յետագայում տարածուել է նաեւ ողջ վանքի վրայ, որը ԺԷ.-ԺԹ. դարերի աղբիւրներում երբեմն կոչւում է նաեւ Ղօշավանք (Խօշավանք): Ղօշերի վրայ պահպանուել է 1102 թ. արձանագրութիւն, որը վկայում է դրա աւելի վաղ՝ թերեւս Բագրատունեաց շրջանում կառուցուած լինելու մասին[15]:

Այժմ անդրադառնանք մեր հետազօտութեան բուն նիւթին եւ փորձենք պարզել, թէ որոնք են Հոռոմոսի վանքի հնագոյն եկեղեցիները: Այս հարցը լուծելու համար ժամանակին Թորոս Թորամանեանը գրել է մի յօդուած՝ «Որն է իսկական Հոռոմոսի վանքը» վերնագրով, եւ մի քանի փաստերի ու հիմնականում ճարտարապետական վերլուծութեան միջոցով եզրակացրել, որ այն ձորամիջի Ս. Գէորգ եկեղեցուց արեւմուտք գտնուող փոքր եկեղեցին է[16]: Վանքի առաջին հետազօտողներն այն կոչել են ենթադրեալ Ս. Մինաս անունով: Ղ. Ալիշանը գրում է, որ ձորամիջի մեծ եկեղեցին Ս. Գէորգն է, իսկ «փոքրն կարծի Ս. Մինաս»[17]: Թ. Թորամանեանն էլ այն անուանում է «կարծեցեալ Ս. Մինաս»[18]: Յետագայում այս անունը տարածում է գտել: Սակայն իրականում չկայ որեւէ սկզբնաղբիւր, որտեղ յիշուի Հոռոմոսի Ս. Մինաս անունով եկեղեցի:

Հէնց սկզբում նշենք, որ, մեր կարծիքով, այս եկեղեցին վանքի առաջին վանահայր Յովհաննէսի ժամանակ կառուցուած եկեղեցին չէ, որն աւելի հասարակ ճարտարապետութիւն պիտի ունենար եւ հնաբաւոր է, որ չի պահպանուել: Ասողիկի պատմութեան մէջ նկարագրւում է 982 թուականի մի դէպք, երբ Աբլհաճ ամիրան «եկեալ զՀոռոմոսի վանքն այրեաց...»[19]:

14 Ժողովրդական աւանդութիւնն ասում է, որ այս աշտարակներից հնչող զանգերի ղօղանջով Հոռոմոսի վանականները տեղեկացել են Անիից եկող թագաւորական շքախմբի մասին (*Լէօ, Անի*, էջ 133):

15 Այս կառոյցը, որպէս քաղաքային մուտքի նախատիպ, օգտագործել է Անիի Բեխենց վանքում հատիպ, ուր նկարագրուել է Մարգարէն 1211 թ. աշխատած մանրանկարիչ Մարգարէն նկարազարդած «Հաղբատի Աւետարանի» «Մուտք Երուսաղէմ» միակ տէրունական մանրանկարում: Աւետարանի ստացողն անեցի Սարգիս քահանան էր, որի ընտանիքի անդամներին նկարիչը պատկերել է «Մուտք Երուսաղէմ» մանրանկարում որպէս Քրիստոսին դիմաւորողներ: Հետաքրքրական է, որ ձեռագիրը կազմուել է Հոռոմոսում, որտեղ աշխատող կազմարար Աբրահամի պատկերը Մարգարէն նոյնպէս նկարել է խորաններից մէկում: Կազմուելուց յետոյ ստացողը մատեանը տարել է Անի, այսինքն, փաստացողը մատեանը անց է կացրել Ղօշերով (*Կ. տօրէն, Աւետարանն անց է կացրել Ղօշերով*, *Մաթեւոսեան, Հաղբատի Աւետարանը*, Երեւան, 2012, էջ 19-24):

16 *Թ. Թորամանեան*, նշ. աշխ., էջ 299-305:

17 *Ղ. Ալիշան, Շիրակ*, էջ 29:

18 *Թ. Թորամանեան*, նշ. աշխ., էջ 300:

19 Շարունակութեան մէջ ասւում է. «...եւ զփրկական նշանն, որ ի վերայ սրբոյ Շողակաթի գմբէթին կանգնեալ էր, ճոպանօք ի վայր բերէր ի ՆԼԱ (982) թուականին» (*Ստեփանոս Տարօնեցի Ասողիկ*, էջ 188-189): Տեսակէտ կայ, որ այստեղ խօսքը վերաբերում է Էջմիածնի տաճարի վրայից խաչի իջեցմանը (*Քրիստոնեայ Հայաստան հանրագիտարան*, Երեւան, 2002, էջ 368): Ղ. Ալիշանն այս հատուածից եզրակացնում է, որ Հոռոմոսի հին եկեղեցին է Շողակաթ անունը կրել (*Շիրակ*, էջ 19): Սակայն միայն Ս. Էջմիածնի համար բնութագրական Շողակաթ (երկնքից կաթած լոյսի շող) անունով այլ եկեղեցի այս վաղ ժամանակներում եւ անգամ յետագայ մի քանի դարերում չի հանդիպում: Հնարաւոր է նաեւ, որ Ասողիկն այստեղ «շողակաթ» բառն օգտագործում է ոչ որպէս յատուկ անուն, այլ որպէս «լուսաշող» բառի հոմանիշ: Ամէն դէպ-

Չենք բացառում, որ խօսքը վերաբերում է Յովհաննէս վանահօր ժամանակի հնագոյն եկեղեցուն, որը կարող էր փայտաշէն կամ փայտածածկ լինել: Կարծում ենք, որ Հոռոմոսի վանքի յետագայ ուսումնասիրութեան ընթացքում ի յայտ կը գան այդ վաղագոյն եկեղեցու հետքերը:

Այժմ անդրադառնանք կարծեցեալ Ս. Մինաս *եկեղեցուն (նկատենք, որ այդ անունով եկեղեցիներ սակաւադէպ են հանդիպում)՝ նախ վկայաբերելով վիմագրական տուեալները: Այս կառոյցի պատին պահպանուել է ոմն Զուտասի 986 թ. նուիրատուական արձանագրութիւնը, որը Հոռոմոսի վանքի ամենահին արձանագրութիւնն է: Եկեղեցում 1013 թ. արձանագրութիւն է թողել նաեւ Հոռոմոսի վանահայր Անանիան, որտեղ խօսում է Գագիկ Ա-ի միջոցով վանքին կատարուած նուիրատուութեան մասին: Այս արձանագրութիւններում եկեղեցու անուն չի տրւում: Մէկ այլ անթուական արձանագրութիւն Անանիան թողել է Ս. Գէորգի պատին, որտեղ իրեն կոչում է Արշարունեաց եւ Այրարատի Ճակատք գաւառի եպիսկոպոս, եւ սահմանում է, որ Հոռոմոսում Զատկի մեռելոցը պիտի մշտապէս վանքի հանգուցեալ վանահայրերի համար կատարուի, իսկ յաջորդ մեռելոցները՝ մինչեւ «Նոր կիրակին», միւս մահացած միաբանների համար: Այս արձանագրութեան սկզբնամասում նա գրում է. «Ես տէր Անանիա... զմտաւ ածեալ հանապազ* զվանս Սրբոյն Յոհաննու...»[20]:

Սոյն արձանագրութիւնը վստահաբար գրուել է մինչեւ 1038 թ., երբ Յովհաննէս Սմբատ թագաւորը կառուցեց վանքի բարձրադիր Ս. Յովհաննէս մեծ եկեղեցին, հետեւաբար՝ Հոռոմոսը Ս. Յովհաննէսի վանք է կոչուել մինչեւ այդ: Սակայն այս կարեւոր վիմագրական տուեալը յետագայի ուսումնասիրողներն անուշադրութեան են մատնել, թերեւս Թ. Թորամանեանի մեկնաբանութեան պատճառով, ըստ որի՝ «այս արձանագրութեան մէջ Սրբոյ Յոհաննու խօսքը կը վերաբերի վանքի հիմնադիր Յովհաննէս վարդապետին»[21]: Սա քիչ հաւանական ենթադրութիւն է: Իրականում Անանիան նշել է վանքի անունն արձանագրութիւնների համար շատ սովորական ձեւակերպմամբ: Մի շարք յարակից նիւթեր հաստատում են, որ արձանագրութեան մէջ նշուած Սուրբ Յովհաննէսը հէնց վանքի անունն է:

Դրանցից մէկը, թէեւ ուշ շրջանից է ծագում, սակայն սպառիչ տեղեկութիւններ է պարունակում վանքի հին անուան եւ եկեղեցաշինարարի մասին: Ակնագիւղեցի Գրիգոր աբեղան 1782 թ. Հոռոմոսում գրած ձեռագրի յիշատակարանում նշում է, որ Հոռոմոսի կառուցողը Աշոտ Ողորմած թագաւորն էր, իսկ վանքը՝ Ս. Կարապետի (այսինքն՝ Ս. Յովհաննէս Մկրտչի) անունով էր. «Վանքն Հոռոմոսի, որ եւ ի թագաւորէն Աշօտայ կերտեալ, եւ անուն Սրբոյ Կարապետին է կառուցեալ...»[22]: Այստեղ կարելի է առարկել՝ ասելով, որ ուշ շրջանի հեղինակը Յովհաննէս Սմբատի կառուցած եկեղեցու անունով է վանքը կոչում: Սակայն Հոռոմոսի այդ գրագէտ միաբանը խօսում է Աշոտ Ողորմածի՝ որպէս վանքի կառուցողի մասին: Կասկածից վեր է, որ նա ծանօթ է եղել նաեւ Յովհաննէս Սմբատի՝ վանքի պատերին թողած մէկից աւելի վիմագրերին, եւ նրան չի շփոթել իր պապի հետ:

Աշոտ Ողորմածի եւ Ս. Յովհաննէս վանքի անունները հանդիպում են նաեւ թագաւորի դստեր՝ Հռիփսիմէի Մաղարդավանքի «ի թուին Փրկչին Թճ եւ Հէ

քում պատմիչի խօսքերը դժուար է միանշանակ մեկնաբանել:

20 *Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս*, էջ 166:

21 *Թ. Թորամանեան*, նշ. աշխ., էջ 303:

22 *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, կազմեց Նորայր եպս. Պողարեան, հտ. Է, Երուսաղէմ, 1974, էջ 55:

(977)» գրուած կտակագրում, որը թէեւ յետագայի միջամտութեան շերտեր ունի, սակայն նաեւ արժանահաւատ տեղեկութիւններ է պարունակում: Ըստ այդ փաստաթղթի՝ Հռիփսիմէ արքայադուստրը, որը հիւանդ է եղել, եկել է Մաղարդավանք (Ս. Ստեփանոս վանքը Նախիջեւանի մօտ՝ Արաքսի աջ ափին)՝ սրբութիւններից բժշկութիւն գտնելու համար: Մէկ ամիս այստեղ մնալուց յետոյ փորձել է վերադառնալ («...ելի դառնալ ի յաւանսն մեր ի քաղաքն Անի»), բայց չի կարողացել («Հասեալք ի գեւղն Աստապատ անկայ ի մահիճս հիւանդութեան»): Մահից առաջ գրել է յիշեալ կտակը, որով Աստապատ գիւղը, որպէս «յիշատակ հոգւոյ», նուիրել է Մաղարդավանքի Ս. Նախավկայի վանքին, միաժամանակ նամակով դիմել է հօրը՝ խնդրելով այդ նուիրատուութեան փաստն արձանագրել «ի վերայ վիմի միոջ... զանգակատան վանից մերոց Սրբոյ Յովհաննէսին...»[23]: Պարզ է, որ Հռիփսիմէ արքայադուստրն, իր հօրը «մեր վանքը» ասելով, պէտք է նկատի ունենար նրա համար առանձնայատուկ կարեւորութիւն ունեցող մի տեղ: Իսկ այդպիսին առաջին հերթին կարող էր լինել թագաւորի կանխատեսած հանգստարան-դամբանավայրը, որը Հոռոմոսն էր:

Յաջորդ փաստարկը գտնում ենք Սամուէլ Անեցու Ժամանակագրութեան՝ ԺԲ. մուէլ Անեցու Ժամանակագրութեան՝ ԺԲ. դարի վերջերին Հոռոմոսում կատարուած ընդօրինակութեան մէջ, որտեղ Հայոց ՆՁԷ (1038) թուականի դիմաց անյայտ հեղինակի ձեռքով յետագայում հետեւեալ յաւելումն է արուած. «Շինուած Հոռոմոսի վանումն է արուած. «Շինուած Հոռոմոսի վանումն է արուած. Ս[ուրբ Յով[հաննէս]ի, ի թ[ա]նացն վերի Ս[ուրբ Յով[հաննէս]ի, ի թ[ա]գ[աւոր]էն Յով[հան]իսէ կատարեցաւ»[24]: Այստեղ Յովհաննէս Սմբատի կողմից մեծ Ս. Յովհաննէս եկեղեցու կառուցման թուականը միանգամայն ճիշտ է (նոյն թուականն է շինարարական արձանագրութեան մէջ), ուստի հեղինակը գիտակ մարդ է եղել: Աւելի ուշագրաւ է սակայն «վերի Սուրբ Յովհաննէս» տեղագրական ձեւակերպումը, որը յուշում է Հոռոմոսում նաեւ ներքին (վարի) Սուրբ Յովհաննէսի գոյութեան մասին[25]:

Վերեւում արդէն նշեցինք, թէ Անին մայրաքաղաք դարձրած եւ իր բարեպաշտութեամբ յայտնի Աշոտ Ողորմածն ինչ մեծ ուշադրութիւն է դարձրել Հոռոմոսին: Հասկանալի է, որ հէնց իր կտակի համաձայն են նրան թաղել Հոռոմոսի վանքում, եւ տրամաբանական է, որ նա այստեղ պիտի մի եկեղեցի կառուցած լինէր: Պատմական ու նաեւ ճարտարապետական տուեալները խօսում են այն մասին, որ դա կարծեցեալ Ս. Մինասն է: Հէնց դրա կողքին է եկեղեցի կառուցել Աշոտի որդին՝ Գագիկ Ա-ն, ընդ որում՝ Ս. Գէորգը եւ հին Ս. Յովհաննէսը, որպէս թագաւորաշէն կառոյցներ, ակնառու ճարտարապետական յօրինուածքային ու յարդարանքի ընդհանրութիւններ ունեն:

Կարծում ենք, որ հին Ս. Յովհաննէս եկեղեցու պատին համապատասխան շինարարական արձանագրութեան բացակայութեան պատճառով է Հոռոմոսում ապրած ակնագիւղեցի Գրիգոր գրիչը հարկ համարել իր յիշատակարանում յատուկ նշել, որ

23 *Գ. Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց*, Անթիլիաս, 1951, հտ. Ա, էջ 142:

24 ՄՄ, ձեռ. թիւ 3613, էջ 60բ:

25 Տեղանուններին կից Վերին եւ Ներքին տեղորոշիչների յաւելումը սովորական երեւոյթ է: Մատթէոս Ուռհայեցին, խօսելով 1064 թ. սելջուկների կողմից Անիի պաշարման մասին, նշում է, որ բիւզանդացիները, քաղաքի պարիսպները թողնելով, ամրացան Վերին եւ Ներքին բերդերում (*Մատթէոս Ուռհայեցի*, էջ 160-161): Խօսքը միջնաբերդի եւ յետագայում Աղջկաբերդ անուանուած ամրոցի մասին է, որը միջնաբերդից աւելի ցածր դիրք ունի եւ «Ներքին բերդ» անունով յիշւում է բազմաթիւ այլ աղբիւրներում, նաեւ այստեղ գրուած մի ձեռագրի յիշատակարանում (տե՛ս *Կ. Մաթեւոսեան, Անի քաղաքի Ներքին բերդի Աւետարանը*,- «Էջմիածին», 1984, ԺԱ-ԺԲ, էջ 110-115): Յայտնի են նաեւ այլ տեղանուններ՝ Վերին Նորավանք, Ներքին Թալին եւ այլն:

Հոռոմոսի վանքը՝ Ս. Կարապետի անունով, Աշոտ Թագաւորն է կառուցել: Յետագայում Աշոտի թոռ Յովհաննէս Սմբատը, քանի որ Յովհաննէս անունն էր կրում եւ ըստ այդմ՝ Յովհաննէս Մկրտիչը նրա հովանաւոր սուրբն էր, ձորամիջի կառոյցներից վեր հիմնել է երկրորդ Ս. Յովհաննէս մեծ եկեղեցին, ժամատնով հանդերձ: Դրանից յետոյ հին եկեղեցու անունն աստիճանաբար մոռացութեան է տրուել, սակայն այդ մասին իմացողներ եղել են, որոնցից մէկն էլ Սամուէլ Անեցու Ժամանակագրութեան լրացնողն է, որը նշում է, թէ Յովհաննէս Սմբատի կառուցածը վերի Սուրբ Յովհաննէսն *է: Հետաքրքրական է, որ Յովհաննէս Սմբատն էլ իր 1038 թ. արձանագրութեան մէջ չեշտում է, որ այդի է նուիրել Հոռոմոսի ի՛ր կառուցած Ս. Յովհաննէս եկեղեցուն («...ետու... զիմ այգին, որ ի Կողբ՝ յիմ եկեղեցիս՝ ի Սուրբ Յովաննէս, զոր շինեցի ի վանսս Հոռովմոսի՝ հանդերձ ժամատամբս...»)*[26]*:*

Հարկ է նաեւ նշել, որ վանքերի անուններն ամէն մի նոր եկեղեցու կառուցումից յետոյ չեն փոխուել: Նոյն Հոռոմոսում թագաւորաշէն Ս. Գէորգի կառուցումից յետոյ ուխտի անունը Ս. Գէորգ չի դարձել: Հոռոմոսից մեզ հասած ամենավաղ՝ 1181 թ. ձեռագրերում Յովհաննէս գրիչը նշում է, որ գրել է «ի տիեզերահռչակ վանս Հոռովմոսի, ընդ հովանեաւ Սուրբ Յովաննիսի...»[27]*: 1187 թ. յիշատակարանում էլ նոյնն է կրկնում. «Գծագրեցի զսա... ի տիեզերահռչակ ուխտիս Հոռոմոսի* կոչեցեալ վանք, ընդ հովանեաւ Սուրբ Յովաննիսի...»[28]*: Տրամաբանական է, որ Ժ. դարի առաջին կէսին հիմնուած վանքը 1038 թուականին Յովհաննէս Սմբատի եկեղեցու կառուցումից յետոյ չէ, որ ստացել Ս. Յովհաննէս անունը, այլ այդպէս է կոչուել ի սկզբանէ, եւ դրա առաջին վկայութիւնը հէնց Անանիա եպիսկոպոսի վերը նշուած արձանագրութիւնն է: Իսկ ներկայացուած միւս տեղեկութիւնները գալիս են հաստատելու այդ իրողութիւնը:*

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ գրականութեան մէջ Հոռոմոսի Ս. Մինաս ենթադրեալ անուամբ յայտնի եկեղեցին ամենայն հաւանականութեամբ կառուցել է Աշոտ Գ Ողորմած թագաւորը, եւ այն կոչուել է Սուրբ Յովհաննէս:

26 *Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս*, էջ 146:

27 *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, Ե-ԺԲ դդ., աշխատասիրութեամբ Ա. Մաթեւոսեանի, Երեւան, 1988, էջ 233:

28 Նոյն տեղում, էջ 251:



Հոռոմոսի վանքը. Բարձրադիր Ս. Յովհաննէս (1038 թ.) եւ ձորամիջի եկեղեցիները:

Ձորամիջի Ս. Յովհաննէս (հին) եւ Ս. Գէորգ եկեղեցիները:



ՄՄ N3613, թ.60բ